ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

նոյեմբերի 2022 թվականի № -Ա
ք. Երևան

«ԷՆԵՐԳՈՏԵԽՆԻԿԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա. «ԷՆԵՐԳՈՏԵԽՆԻԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված 2022 թվականի սեպտեմբերի 1-ի №Է-044 և սեպտեմբերի 5-ի №-046 գրություններով բողոքարկել է՝

1) Հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 6-ի №278-Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ խնդրելով չեղարկել այն և ըստ էության քննարկել 2022 թվականի փետրվարի 10-ի №Է-011 գրությամբ ներկայացված դիմում-բողոքը (այսուհետ՝ Դիմում): Որպես պահանջի հիմնավորում մատնանշելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածը, 43-րդ հոդվածի 3-րդ մասը, 47-րդ հոդվածի 2-րդ մասը, 72-րդ հոդվածը, 73-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ Ընկերությունը պնդել է, որ Դիմումը համապատասխանում է Օրենքի 72-րդ հոդվածով սահմանված՝ վարչական բողոքին ներկայացվող պահանջներին և առկա չեն այն առանց քննության թողնելու հիմքեր,

2) «Հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 7-ի №ՍԱ/34.3-Մ2-4/2224-2022 գրությամբ ամրագրված Հանձնաժողովի անգործությունը», մասնավորապես Ընկերությունը վերստին պնդել է Ընկերության 2022 թվականի ապրիլի 11-ի №Է-031 գրությամբ ներկայացված Ընկերության փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի գնման երաշխիքային ժամկետի հաշվարկման, ինչպես նաև Ընկերությանը տրամադրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրաքանակների խնդրի մասին փաստարկները.

բ. նշված բողոքների առնչությամբ հարուցված և իրականացված վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

1) Որոշման և Հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 7-ի №ՍԱ/34.3-Մ2-4/2224-2022 գրության (այսուհետ՝ Գրություն, որը Ընկերության կողմից որակվել է որպես անգործություն) իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ, համաձայն որի՝ վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում.
- Օրենքի 72-րդ հոդված, համաձայն որի՝ բողոքը պետք է պարունակի՝

ա) այն վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է բողոքը.

բ) բողոք բերող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, նրա հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա անունից բողոք բերող անձի անունը, ազգանունը և պաշտոնը.

գ) բողոքարկման առարկան.

դ) բողոք բերողի պահանջը.

ե) բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

զ) բողոքը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.

է) բողոք բերող անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից բողոք բերող անձի ստորագրությունը.

- Օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մաս, համաձայն որի՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս բողոքը թողնվում է առանց քննարկման, եթե դա ներկայացված է Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, և ժամկետը բաց թողնելը Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հարգելի չի ճանաչվել,
- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մաս, համաձայն որի՝ վարչական վարույթի շրջանակում կայացված՝ Հանձնաժողովի անհատական բնույթ կրող գրավոր որոշումներն ընդունման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնվում են վարույթի մասնակիցներին.

2) Որոշումն ընդունվել է, իսկ Գրությունն ուղարկվել է օրենքներին ու գործող իրավակարգավորումներին համապատասխան, ուստի դրա վերանայման հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Ընկերության 2022 թվականի ապրիլի 11-ի №Է-031 գրությամբ ներկայացված դիմում-բողոքը թողնվել է առանց քննության, քանի որ Ընկերությունը վարչական բողոքը ներկայացրել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, մասնավորապես, Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №479Ա որոշումն անբողոքարկելի է դարձել 2022 թվականի ապրիլի 1-ից, մինչդեռ Ընկերությունը դրա դեմ բողոքը Հանձնաժողով է ներկայացրել 2022 թվականի ապրիլի 11-

ին: Ինչ վերաբերում է Դիմումին, ապա այն չի կարող դիտվել վարչական բողոք, քանի որ չի համապատասխանում Օրենքի 72-րդ հոդվածով սահմանված պահանջներին, իսկ Օրենքի իմաստով Հանձնաժողովը 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №479Ա որոշման բողոքարկման գործընթաց կարող էր նախաձեռնել միայն Օրենքի պահանջներին համապատասխան վարչական բողոք ներկայացնելու դեպքում: Մասնավորապես, բողոքում ի թիվս այլնի, պետք է հստակ արտացոլվի բողոքաբերի պահանջը, այն է՝ լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչել որոշումը, փոփոխել այն, առոչինչ ճանաչել և այլն: Մինչդեռ, Ընկերությունը Դիմումում պարզապես նշել է, որ համաձայն չէ Ընկերությանը վերաբերող ձևակերպումներին և խնդրել է Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №479Ա որոշումը համարել իր կողմից բողոքարկված՝ առանց ըստ էության պահանջ նշելու: Գրության առնչությամբ հարկ է նշել, որ դրանով, հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասը, Ընկերությանն է ուղարկվել Որոշումը: Միաժամանակ, թեև բողոքը թողնվել է առանց քննության, և Հանձնաժողովը չի ունեցել որևէ պարտավորություն անդրադառնալու դրանում բարձրացված հարցերին, այնուամենայնիվ, նպատակ ունենալով Ընկերությանն առավել հասու դարձնել Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №479Ա որոշման ընդունման հիմնավորումները, մեկնաբանել է այն և տեղեկացրել, որ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Զույգաղբյուր» ջրատարից խմելու ջուրը դեպի Թուրքիա ուղղելու հանգամանքների, ինչպես նաև Ընկերությանը տրամադրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված և փաստացի ստացված ջրաքանակների տարբերության պատճառների ուսումնասիրությանն առնչվող խնդիրները դուրս են Հանձնաժողովի իրավասության շրջանակից: Իսկ Հանձնաժողովի կողմից անգործություն դրսևորելու առնչությամբ Ընկերության պնդումներն ընդհանրապես անհասկանալի են, քանզի Հանձնաժողովի կողմից հարցի առնչությամբ ձեռնարկվել են օրենսդրությամբ նախատեսված պատշաճ միջոցներ և որևէ անգործություն չի դրսևորվել: Անդրադառնալով Ընկերության փաստարկներին՝ հարկ է նշել, որ դրանք անհիմն են և առարկայազուրկ: Ընկերությունը, մատնանշելով մի շարք իրավանորմեր որևէ կերպ չի հիմնավորել Որոշման և Գրության օրենքին կամ որևէ այլ իրավական ակտին հակասելու հանգամանքը.

գ. Որոշման և Գրության փոփոխման կամ բեկանման՝ Օրենքի 77-րդ հոդվածով սահմանված հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով Օրենքի 76-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել Ընկերության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի №Է-044 և սեպտեմբերի 5-ի №-046 գրություններով Հանձնաժողով ներկայացված վարչական բողոքները:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
Նոյեմբերի 2022թ.